

Իւ զկնի երից աւուրց՝ եկին հասին ի Մուշաղ-
շինոյ՝ մար իշխանէն եւ դատաւորէն արք, որք տե-
սեալ զիրսն՝ ծանուցին մեծի խանին, որ ի Բաղէշ.
եւ մեր գնացեալ ընդ նոսա, առնուլ հրաման եւ
շինել զանկեալսն²: Իհաս յօգնութիւն Ս. Կարա-
պետն եւ քաղցրացոյց Տէր զսիրտ բռնակալին, որ
ետ հրաման նորոգ կերտելոյ: Սակայն՝ կարի շատ
տառապանս կրեցաք ի խտասիրտ աղգէն մարաց:
Իւ այն զի ոչ գտանիւր առ ձեռն պատրաստ ի մեր-
ձակայ տեղիսն, որ ինչ պիտոյն էր ի նիւթ շինուա-
ծոյն, վասն որոյ յոգն նեղութեամբ գտանէին իրքն:

Բայց ի խնամոցն Աստուծոյ երթեալ ընդ
կողմն հիւսիսոյ, հասանելով յաղբիւրն Բաբելոն,³
անցանելով զջուրն, որ Աստուծոյ եւ Աստուծոյ ա-
ռնաք ասի³, ելանելով ի կատար նոյն լերինն քար-

է Բաբելոնաց Բել-ը, որովհետեւ վարդապետներ հոն ժողո-
վուելով կը բամբասեն եղբր իրենց վանահայրը (= Հայրիկը):
Այս հողաբլուրին առջեւ կայ գերեզմանատուն մը (Աւել
գրեիւմ), այսինքն՝ Ս. Կարապետի ճիշդ հարաւային կողմը:
Ս. Կարապետի եւ այդ գերեզմանատան մէջտեղ է Անտոն եւ
Կրօնիգէսի իւ Եօթն խոտածարակաց մատուռը այգիով՝ փա-
կուած: Հողաբլուր մըն ալ կայ Ս. Կարապետի հիւսիսային
կողմը, որուն առջեւն է ուրիշ գերեզմանատուն մըն ալ: Այս-
տեղ Աւետիսի Բել-ը կը կոչուի հին ատեններէ ի վեր. հոն
թաղման հարանց Բել-ըն, որ է ընդ աջմէ Եկեղեցւոյն ընդ
Աւետիսի Բել-ըն, իրեւ ահն ի միջի (Յովհ. Եպս.):

Այս կողմն է որ երեք օր բացօթեայ կը մնան Ս. Կա-
րապետի միաբանները:

1 Մշոյ գաշտին արեւելեան կողմը Չգուրի նշանաւոր
գիւղը, մինչեւ հիմայ Մուշաղէն կը կոչուի:

2 Օսմանեան զահուն հպատակ տեղացի թուրք խա-
ներ կը կառավարէին այդ կողմերը:

3 Այս աղբիւրները, իրենց անունը կը պահեն մինչեւ
հիմայ, Բաբելոնի Ս. Կարապետի Արեւմտեան հիւսիսային
կողմն է, համով ջուրի փոքրիկ աղբիւր մը, որ կը խառնուի